



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1010

9(47)

17 95

JGK

1904

խօլետարներ թուր երկրների, միացե՛ք!

Գրքանի սօց. դիմ.


ՌՌԻՍՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱԶՄՈՒՄ

ե ի

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Կ Ա Ց Մ Ո Ւ Մ



(Թարգմանություն)



Հրատարակողը, Վնասական սօց.-դիմակ. ընկերություն, Կազմակ. Միություն



9(47)
Ռ-95

2004

Ժողովրդական
Ֆարսան Կ. Ս. Ք. Կ. Միություն
1904



ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԶԱՂԱԶԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Ե Ր

9(47) Բ Ա Ն Ի Ո Ր Ն Ե Ր Ը

Ռ-95



56

Handwritten signature



Երոպայում բացի Ռուսաստանից կան Գերմանական, Անգլիական, Ֆրանսիական, Իտալական, Ղվեյցարական և ուրիշ պետութիւններ: Գրանցից մի քանիսը, օրինակ Գերմանականը, Անգլիականը և ուրիշները ինչպէս և Ռուսաստանը ունեն իրենց թաղաւորները, իսկ մի քանիսը, ինչպէս օրինակ Ֆրանսիական կամ Ղվեյցարական պետութիւնները թաղաւորներ չունեն, այլ նոցա փոխարէն ունեն նախագահներ, որոնք ընտրոււմ են ժողովրդի միջից մի քանի տարի ժամանակամիջոցով, ինչպէս օրինակ մեր քաղաքագլուխները, սանուտէրները և այլն:

Այդ բոլոր երկրներում ինչպէս թաղաւորները նոյնպէս և նախագահները առանց ժողովրդի ներկայացուցիչների կամ այլ խօսքով, պարլամենտի համաձայնութեան չեն կարող հրատարակել ոչ մի օրէնք, և բացի դրանից, պարլամենտի ամեն մի անդամ իրաւունք ունի առաջարկելու այս կամ այն օրէնքը: Այդպիսի կառավարութեան անւանում են սա հմանադրական կառավարութիւն:*) Այդպի-

12908 8091 8091 8091



*) Այսինքն, երբ կառավարութիւնը իրաւունք չունի իր կանխիկ համաձայն, առանց ժողովրդի ներկայացուցիչների համաձայնութեան գործել:

սի երկրներում թագաւորի իշխանութիւնը սահմանափակուած է պարլամենտի իշխանութեամբ, իսկ նախագահը գոյութիւն ունի այնպէս, ձեւի համար. գլխաւոր իշխանութիւնը պատկանում է մինիստրներին, որոնք պատասխանատու են պարլամենտի առջ և այս վերջինս կարող է նրանց հեռացնել անմիջապէս, երբ այդ հարկ կը համարի: Ահա այդ պատճառով այդպիսի պետութիւնների կազմը կոչւում է սահմանադրական:

Սահմանադրական երկրներում պարլամենտի իւրաքանչիւր անդամ, կամ, ինչպէս ուրիշ խօսքով ասում են, դեսյուտատ իրաւունք ունի կառավարութիւնից հաշիւ պահանջելու թէ ինչպէս է նա վարւել այս կամ այնինչ հարցի վերաբերեալ, ինչ հիման վրայ և այլն: Այնտեղ, վերջապէս գոյութիւն ունի գործադուլների, ժողովների, խօսքի և մամուլի ազատութիւն: Այն երկրում, որտեղ գոյութիւն ունի այդպիսի ազատութիւն՝ նրա մասին ասում են որ այնտեղ գոյութիւն ունի քաղաքական ազատութիւն: Չնայելի քաղաքական ազատութեան արտասահմանի բանւորները կարող են իրենց ներկայացուցիչները ունենալ պարլամենտում, իրաւունք ունեն գործադուլներ առաջ բերել, ընկերակցութիւններ, կուսակցութիւններ և գանձարաններ հիմնել, ժողովներ գումարել և այդ ժողովներում ազատ կերպով խօսել ինչ բանի մասին ցանկանում են, հրատարակել իրենց լրագիրները և գրքերը:

Ահա, կարճ կերպով ասած, որպիսի քաղաքական կազմ ունեն Եւրոպայի միւս պետութիւնները:

Բայց բոլորովին հակառակն է մեզ մօտ՝ Ռուսաստանում: Մենք չունենք պարլամենտ, որը օրէնքներ հրատարակէր. մեզ մօտ օրէնք հրատարակելու իրաւունքը պատկանում է միմիայն ցարին: Ռուսաստանի այսպէս կոչուած “հիմնական օրէնքների”

20293-609

առաջին յոգւածն ուղղակի ասում է.— “Ռուսաստանի կայսրութիւնը կառավարւում է միապետական իշխանութիւնից (այսինքն ցարից) ծագած իրաւունքների հաստատուն հիմունքներով”: Մեր պետութեան մէջ ամբողջ իշխանութիւնը գլխաւորապէս պատկանում է նոյնպէս ցարին՝ նա կառավարում է ամբողջ երկիրը այնպէս, ինչպէս որ նա հարկաւոր և օգտակար է համարում: Ահա այդ պատճառով Ռուսաստանի քաղաքական կազմը կոչւում է անսահման միապետութիւն:

Բայց հարց է առաջանում, թէ արդեօք Ռուսաստանի ցարը ինչպիսի օրէնքներ է հրատարակում, այսինքն Ռուսաստանի ազգաբնակչութեան որ գաստակարգին են օգտակար այդ օրէնքները և ում է արդե՞օք պաշտպանում ցարը իր իշխանութեամբ՝ աղքատներին թէ հարուստներին?

Քննենք այդ հարցերը:

Նայեցէք թէ ինչ է անում Ռուսական կառավարութիւնը բուրժուազիայի—գործարանատէրերի, վաճառականների, ագնւականութեան, կալւածատէրերի և առհասարակ բոլոր հարուստների երջանկութեան և բարօրութեան համար: Նա ամենայն ինամատարութեամբ, ինչպէս մի լաւ մայր, հոգում է բուրժուազիայի կարիքների մասին. “արդեօք ձեզ ոչինչ հարկաւոր չէ, սիրելի երեխաներս, կուշտ և բաւական էք արդեօք դուք, ոչ ոք չի նեղացնում ձեզ”, և այլն: Ահա հէնց այդպէս են նայում ցարը և իրեն կառավարութիւնը բուրժուազիայի վրայ:

Երբ հարկաւոր է գործարանային արդիւնաբերութեան և բանւորների վերաբերեալ որևէ օրէնք հրատարակել. ցարի կառավարութիւնը հարցնում է գործարանատէրերի կարծիքը. հարկաւոր է արդեօք հրատարակել այդ օրէնքը կամ ինչպիսի օ-

ու ԵՂ. Ե

րէնք են նրանք ցանկանում: Օրինակ, երբ կազմում էին 1897 թ. յունիսի 2ի օրէնքը աշխատելու ժամերի թիւը գործարաններում կրճատելու մասին (մինչև 11¹/₂ ժ. օրեկան), այդ օրէնքը քննող յանձնաժողովին հրաւիրւած էին մօտ 200 գործարանատէրներ, այն ինչ բանւորներից, այսինքն նրանցից, որոնց անմիջապէս վերաբերում է այդ օրէնքը, ոչ ոքի արժանի չէին տեսել հրաւիրելու: Ինչո՞ւ համար հրաւիրել. նրանք միայն կրնեղացնեն «խեղճ» գործարանատէրերին! Ահա թէ ինչու յունիսի 2-ի այդ օրէնքը այնքան վատ օրէնք դուրս եկաւ բանւորների համար:

Եւ միշտ այդպէս է վարւում ցարի կառավարութիւնը. նախ քան որ եւէ օրէնք հրատարակելը նախորհրդակցում է այդ մասին կամ գործարանատէրերի և վաճառականների, կամ աղնւականների և կալւածատէրերի հետ, իսկ գիւղացիների և բանւորների կարծիքների մասին նա լսել անգամ չի ուզում:

Վերցնենք հէնց 1900 թ. մարտ ամսի Պետերբուրգում կայացած արհեստաւորների համագումարը. այդ համագումարին մասնակցելու էին հրաւիրւած գործատէր արհեստաւորները, այն ինչ բանւոր-արհեստաւորների մասին նորից մոռացել էին: Բայց չէ որ բանւոր արհեստաւորներն են գտնուում ծանր և անտանելի դրութեան մէջ և ոչ թէ գործատէր բանւորները: Բանը հէնց նրանումն է, որ Ռուսաստանի ցարի և նրա կառավարութեան համար թանգ են գործարանատէր կապիտալիստները և ոչ թէ բանւորները: Այդ գործատէր բանւորները այնքան դրաւուեցին ուրիշի՝ այսինքն իրենց բանւորների աշխատանքը վայելելու քաղցրութիւնից, որ այդ համագումարում վճուեցին աշխատանքի ժամերի թիւը հասցնել օրեկան մինչև տասնևմէկ

ու կէս ժամի* և մինչև անգամ հարկաւոր համարեցին որոշել «հայրական միջոցներով» պատժել իրենց աշակերտներին: Բանւոր արհեստաւորները շատ լաւ գիտեն թէ ինչ են այդ «հայրական» պատիժները և եթէ նրանք մասնակցէին այդ համագումարին, այն ժամանակ ոչ միայն այդ որոշումները չէին կայանայ, այլ և նրանք կըպահանջէին իրենց որոշ իրաւունքներ: Հէնց զրա համար էլ նոքա հրաւիրւած չէին. կառավարութիւնը հոգում է ոչ թէ նրանց բարօրութեան համար, այլ աշխատում է որքան կարելի է նեղել նրանց: Նա գործատէր-կապիտալիստների բարեկամը և բանւորների թշնամին է:

Կամ մի ուրիշ թարմ օրինակ. 1900 թ. մարտի ամսին Ֆինլանտների մինիստրութիւնը հրատարակեց «Գործարանային տեսչութեան չինովնիկներին հրաման», -ը, որով կառավարութիւնը կարգադրում է թէ գործարանային վերատեսուչները ինչպէս պէտք է գործեն գործարաններում, ինչպէս պէտք է վարեն բանւորների հետ և ինչ հրամաններ տալ: Այդ «հրամանը» հրատարակելիս կառավարութիւնը նայնպէս գործարանատէրերի հետ ունեցած բարեկամութեան սահմաններից դուրս չէ գալիս... Այսպէս, գործարանային ատեսններում, որտեղ քննուում են և անմիջապէս բանւորներին վերաբերեալ հարցերը, մասնակցում են գործարանատէրերի ներկայացուցիչները. բանւորները այստեղ էլ մոռացութեան են մատնւած...

Ճիշտ է, թէև մենք պարլամենտ չունենք, բայց գործարանատէրերը և առհասարակ հարուստ ու անւանի մարդիկ առանց պարլամենտի էլ շատ լաւ

*) Այժմ օրէնքով աշխատաւորի իսկական բանւորական օրը (եթէ հանենք այն 2 ժամը որ տրւում է նախաճաշի և ճաշի համար) 10 ժամից աւելի չի կարող տևել:

են ապրում: Այն, հարուստներին հարկաւոր չէ պարլամենտ. առանց նրան էլ գործարանատէրերը և ազնւականները քննում են այսօր կամ այն օրէնքը, առանց պարլամենտի էլ նրանք կարող են յայտնել իրենց ցանկութիւնները և ինչ օրէնք որ հարկաւոր է բուրժուազիային՝ ցարը խսկոյն կը հրատարակէ՛ Սրա վրայ հարկաւոր է աւելացնել և այն, որ ցարի կառավարութիւնը օրէնքները այնպէս է խրմբագրում, որ հարուստները միշտ կարողանան խախտել այն, այսինքն՝ չկատարել, իսկ բանւորների դրութիւնը ոչ միայն չթեթեւանայ, այլ և որպէսզի այդ օրէնքով ոստիկանութիւնը և ժանդարմերիան նեղեն բանւոր դասականքին սրքան կարող են:

Վերցնենք հէնց օրինակ բանւորներին շատ լաւ յայտնի 1897 թ. յունիսի 2ի օրէնքը:

Այդ օրէնքը ցարը հրատարակեց իբր թէ բանւորների աշխատանքի ժամերը կրճատելու համար. դա մի կատարեալ խաբէբայութիւն է. իսկպէս յունիսի 2ի օրէնքը այնպէս «խելօք», կերպով է գրւած, որ եթէ գործարանատէրերը եթէ նոյն իսկ կատարեն այդ օրէնքը (ինչպէս յայտնի է Ռուսաստանում հարուստները, ոստիկանութիւնը և միւս աստիճանաւորները օրէնքները չեն կատարում) շատ դէպքերում բանւորների համար աւելի վատ կլինի քան թէ լաւ: Օրինակ այդ օրէնքը կրճատում է տօների թիւը և իրաւունք է տալիս գործարանատէրերին սովորական ժամերից դուրս աշխատեցնել — հարկաւոր է միայն որ նրանք ցանկանան այդ: Եթէ ուշադրութեան արնենք հէնց միայն այս երկու կէտերը, դուրս կգայ, որ աշխատանքի ժամերի թիւը ոչ միայն չէ կրճատուում, այլ և շատ գործարաններում գուցէ աւելանում է: Բայց այդ դեռ բոլորը չէ: Այդ օրէնքին մինիստրը կցել է որոշ կանոններ, որոնցով մանրամասնօրէն որոշուում են այն

դէպքերը, երբ գործարանատէրերը կարող են շեղւել օրէնքից, այսինքն, հաշարակ լեզուով տանք, չկատարել այդ օրէնքը: Դսկ թէ գործարանային վերտեսչութիւնը կամ բանւորները կարող են պահանջել արդեօք գործարանատէրերից «շեղւել», օրէնքից յօգուտ բանւորների, այդ մասին ոչ մի խօսք չկայ օրէնքի մէջ... Առհասարակ յունիսի 2ի օրէնքը մինիստրներին և ցարի չինովսիկներին լիակատար իրաւունք է տալիս իրենց հայեցողութեան համեմատ փոփոխել այդ օրէնքի պահանջները յօգուտ գործարանատէրերի:*)

Վերջապէս ամենագլխաւորն այն է, որ օրէնքը խախտելու համար գործարանատէրերին ոչ մի պատիժ չէ նշանակւած: Խախտեցէք, որքան կարող էք այդ օրէնքը, պ.պ. կապիտալիստներ, դրա համար ոչ մի պատիժ չէք կրի... Ամենամեծ պատիժը որին կարող են ենթարկւել նրանք այդ օրէնքը խախտելու համար, դա 50 ր. կամ գուցէ մի քիչ աւելի տուգանք է: Բայց ինչ նշանակութիւն ունի նրա համար այդ չնչին գումարը: Նրան ձեռնտու է աւելի շուտ խախտել օրէնքը քան կատարել, որովհետև այդ 50 ր. փոխարէն նա բանւորից կրկեղէքի դրանից շատ և շատ անդամ աւելի: Մանաւանդ որ ով զիտէ, դատաստանը ինչ որոշում կը կայացնի այդ մասին: 2է որ դատաւորներն էլ ցարի ծառաներն են, նրանք էլ հարուստների կողմն են պահւում և ոչ թէ բանւորների: Այնինչ եթէ որ և է բանւոր յանդգնի խախտել օրէնքը, նրան խսկոյն պատասխանատուութեան քաշ կտան: Օրինակ, նշանակւած ժամանակից առաջ գործը թողնելու հա-

*) Մեր անկեղծ խորհուրդն է բանւորներին լաւ ծանօթանալ «Նոր գործարանային օրէնք», զբքոյկի հետ: Այնտեղ մանրամասն քննում և պարզարանում է Յունիսի 2 օրէնքի նշանակութիւնը:

մար նրան սպառնում է ձեռքափայլութիւն, գործադուլի համար օրէնքը նրան սպառնում է նոյն իսկ բանտարկութիւն: Միւսնոյն ժամանակ եթէ գործարանատէրը խախտում է մի օր և է օրէնք և դրանով գործադուլի դատժառ է դառնում, ենթարկւում է միմիայն չնչին տուգանքի և շատ անգամ նոյն իսկ դրանից էլ է ազատում:

Առհասարակ ինչ որ կարելի է և թոյլատրելի բուրժուազիտային, այն անկարելի է և անթոյլատրելի բանւորին:

Ուրեմն գործարանատէրերը, կալւածատէրերը, ազնւականութիւնը, վաճառականները և բուրժուազիտայի միւս խմբերը իրաւունք ունեն ընկերակցութիւններ և ժողովներ կազմել, որտեղ նրանք կարող են ազատ խօսել իրենց կարիքների մասին, որպէս զի յետոյ կառավարութեանը առաջարկեն իրենց այս կամ այն պահանջները: Բուրժուաներն ունեն իրենց ընկերութիւնները, միութիւնները և հիմնարկութիւնները, որտեղ մշակում են իրենց ապրուստը աւելի ու աւելի լաւացնելու միջոցներ: Բուրժուազիան ունի իր մամուլը—լրագիրները, ամսաթերթերը և զրքերը, որոնց միջոցով նա ազատ կերպով խոհում է իր կարիքների մասին: Աերջապէս աւելացնենք և այն, որ գործարանատէրերը կարող են մինչև անգամ գործադուլներ անել (սինդիկատներ*) որպէս զի իրենց ապրանքների գները աւելացնեն: Այս բոլոր իրաւունքներից զուրկ են բանւորները. հէնց նրանք փորձում են որևէ ըն-

*) Արդիւնարկութեան մի օրևէ ճիւղի, օրին. չաքարի, ծխախոտի և այլն գործարանատէրերը փոխադարձ համաձայնութիւն են կայացնում, որի շնորհիւ նշանակում են ապրանքի գները, ինչպէս ցանկանում են և աւելի չափող կերպով չահագործում բանւորներին: Այդպիսի ընկերութիւնները կոչւում են սինդիկատներ: Ծան. թարգմ.

կերութիւն հիմնել, ժողով կամ գործադուլ անել և կամ որևէ զիրք հրատարակել, իսկոյն ժանդարմները և ոստիկանները գիշատիչ անգղների պէս ընկնում են վրա, բռնում նոցա և առանց որևէ յանցանքի բանտ գնում և նոյն իսկ Սիբիր աքսորում: Իսկ այդ միջոցին բանւորների թշնամի գործարանատէրները ժողովներ են հռաւիրում և «նորին մեծութեան» չինովնիկների հետ միասին խարճըրդակցում և օրէնքներ հնարում թէ ինչ միջոցներով աւելի նեղ լծեն տշխատաւոր դասակարգին, որպէս զի նրանք չկալուղանան նոյն իսկ ծագուն հանել...:

Սակայն սա դեռ բոլորը չէ, ինչ որ ցարը և իր կառավարութիւնը անում են իրենց սիրելի բուրժուազիտի համար. ցարը այնքան է սիրում նրանց, որ ոսկու անձրևներ է թափուր նոցա գլխին. վաճառականների և գործարանատէրների համար բանկեր է հիմնում, որտեղից նրանք նւազ տոկոսներով փոխառութիւններ են անում, ազնւականներին ժողովրդի փողերից միլլիոններ է ընծայում, արտասահմանի ապրանքների վրայ մեծ մաքս է նշանակում, որպէս զի Ռուսաստանի գործարանատէրերը թանգ գնով վաճառեն իրենց ապրանքները, այսինքրն աւելի մեծ օգուտներ ստանան... վերջապէս նա երկար ժամանակով մի քանի արտասահման արտահանող ապրանքների համար մինչև անգամ դրամային նպաստներ էր տալիս (օրին. շաքարի), իսկ նպաստները վերացնելուց յետոյ թոյլատրեց, որ շաքարի գործարանատէրերը ընդհանուր համաձայնութեամբ որոշւած աւել շաքար բաց չթողնեն Ռուսաստանի ներսում վաճառելու համար: Ծնորհիւ գրան առական շաքարը Անգլիայում այնքան արժան է, որ այնտեղ խաղերին շաքարով են կերակրում, մինչդեռ մեզ մօտ շաքարը այնքան թանգ է

որ ժողովրդի մեծամասութիւնը իսկի չի էլ տեսնում նրան աչքով: Բայց զրա փոխարէն գործարանատէրերը միլիոններով օգուտներ են դնում ջիբը:

Վերջապէս որ մէկն ասենք՝ Ռուս կառավարութիւնը այնքան բաներ է անում հարուստների համար որ բոլորը թւել չի կարելի: Մի խօսքով, թէ ցարը և թէ նրա չինովնիկները (մինիստրները, նահանգապետները, ժանդարմները, ոստիկանութիւնը և այլն) միայն նրա մասին են հոգում, որ Ռուսաստանում հարուստ և անւանի մարդիկ ազատ և լաւ կեանք ունենան: Դսկ թէ այդ միջոցին ինչ կը լինի բանւոր դասակարգի և խեղճերի դրութիւնը՝ ցարը ոչ միայն չէ մտածում, այլ և աւելի է աշխատում նեղել նրանց: Բուրժուազիան նրա հարազատ որդին է իսկ բանւորը խորթ որդին. ինչպէս որ խորթ մայրը ամեն կերպ աշխատում է իր հարազատ զաւակների համար ու ամեն յարմարութիւններ տալիս, իսկ խորթ զաւակներին ամեն բանից զրկում է, այնպէս էլ Ռուսաստանի կառավարութիւնը վարում է մեղ հետ:

Բանւոր դասակարգի համար միւլենոյնն է թէ ով է ցարը— Ալէքսանդրը, նիկոլայը թէ Միխայիլը: Յարերի փոփոխելը նրա համար ոչ մի նշանակութիւն չունի: Բանը նրանումը չէ, թէ արդեօք ցարը բարի է թէ չար, խելօք է թէ լիմար, այլ, ինչպէս ասում են, բանը կառավարութեան սխառտմի մէջն է, այսինքն, այն կարգերի, որոնք մեզ մօտ գոյութիւն ունեն: Ինչպէս յայտնի է, այդ կարգիչնորհիւ միայն աշխատաւոր դասակարգն է որ անտանելի կեանք ունի. նա խեղճ է ապրում, աշխատում իր ոյժերից վեր, այդ աշխատանքը քայքայում է նրա առողջութիւնը և չնչին վարձատրութիւն տալիս, այդ դեռ բաւական չէ, նրան ծեծում են մտրակներով և հրացանազարկ անում:

Բայց ամենավատը այն է, որ նշան թոյլ չեն տալի կուէրու այդպիսի կարգերի դէմ, նրան արգելում է ձեռք բերել լաւ վիճակ: Այդպիսի կարգերը, քաղաքական այդպիսի կազմը ձեռնտու է բուրժուաների, ցարի և նրա կառավարութեան համար, որովհետեւ եթէ այդ կարգերը ոչնչանան, այսինքն, եթէ Ռուսաստանում քաղաքական ազատութիւն լինի, այն ժամանակ բուրժուազիան ու նրա պաշտպան ցարն ու իր կառավարութիւնը այլ ևս չեն կարող այնպէս ազատ կեանք ունենալ ինչպէս այժմ, որովհետեւ այն ժամանակ բոլոր բանւորները բացարձակ և մեծ յաջողութեամբ կը պաշտպանեն իրենց իրաւունքները: Ահա թէ ինչու համար ցարը այնքան նեղում է բանւորներին և այդքան մեծ հողատարութիւն ունի բուրժուազիայի վրայ. պաշտպանելով բուրժուազիային, ցարը դրանով պաշտպանում է ինքն իրեան և իր չինովնիկների գունդը: Եւ որովհետեւ ոչ ոք իրեն թշնամի չէ, այդ պատճառով և ցարը—ինչպէսին էլ որ նա լինի, խելօք թէ լիմար, բարի թէ չար—միւլենոյն է, ոչ մի հաշիւ չկայ նրա համար բանւորներին իրաւունքներ, քաղաքական ազատութիւն տալու: Իսկ մինչև որ մենք չունենանք քաղաքական ազատութիւն, այսինքն մինչև որ չունենանք պարլամենտ, որտեղ ազգաբնակչութեան միւս դասակարգերի հետ մասնակցեն և բանւորների ներկայացուցիչները, ցարի փոփոխելուց— եթէ մինչև անգամ ներկայ լիմար ցարի տեղը նստէր մի ուրիշ խելօք և բարի ցար—բանւորների դրութիւնը չի բարւոքւի:

Այժմս մենք կարող ենք պատասխանել վերև առաջարկած հարցերին. ինչ տեսակ օրէնքներ է հրատարակում ցարը, ում են օգտակար դրանք և ում է պաշտպանում ցարը իրեն իշխանութեամբ:

Յարը հրատարակում է այնպիսի օրէնքներ, որ

նրանք օգտակար լինեն հարուստներին և նեղեն բանւորներին ու գիւղացիներին*։ Այդ օրէնքները հրատարակուած են կամ բուրժուազիայի պահանջմամբ կամ նրա համաձայնութեամբ... Յարի իշխանութիւնը հուսատարայէս խիստ և ամենակարող է միմիայն բանւորների ու աղքատ գիւղացիների վերաբերմամբ և մէկ էլ հասարակութեան միւս դասակարգերից այն գոքքաթիւ անձանց—սօցիալիստների—վերաբերմամբ, որոնք պաշտպանուած են բանւոր դասակարգի շահերը և կուռուծ են յանուն նրա երջանկութեան կառավարութեան և կապիտալիստների դէմ։ Դսկ հարուստները ապրում են երջանիկ կեանքով։ Յարի իշխանութիւնը միմիայն բանւորների և նրանց պաշտպանների համար է միահեծան և անասճման։ Նրանց հետ կարող է վարել այնպէս, ինչպէս ցանկանում է, միայն թէ բուրժուազիայի բարօրութեան չվնասէ։ Այստեղ ցարը լիակատար տէր է, ինչպէս մի առակի մէջ պատմուող գայլը, որը իր ճանկն ընկած նապաստակին ասում է. «ուզենամ քեզ կուտեմ, ուղնամ կազատեմ!»։

Այսպէս ուրեմն, այժմ մենք զիտենք որ թէև Ռուսաստանում պարլամենտ չկայ, թէև ցարի իշխանութիւնը Ռուսաց օրէնքներով միահեծան և անասճման է, այսինքն նա ցարը կարող է օրէնքներ հրատարակել առանց որ և է մէկին հարցնելու և նրա հետ խորհրդակցելու, բայց իսկապէս այդ միայն թղթի վրայ գոյութիւն ունի. իրականութեան մէջ ցարը և իր կառավարութիւնը ոչինչ չեն անում առանց բուրժուազիայի համաձայնութեան, ամեն մի օրէնք, կառավարչական ամեն մի

*) Գիւղացիների աղքատ մասը, այսինքն նրանց ահազին մեծամասնութիւնը նեղուած է ցարի կառավարութիւնից բանւորներից ոչ պակաս, սակայն այդ մասին առանձին։

կարգադրութիւն հրատարակուած են բուրժուազիայի բարօրութեան համար։ Յարր բուրժուազիայի ծառան, պահապանն է։ Նա ամեն լոպէ պատրաստ է կատարելու և, ինչպէս տեսանք, կատարում այն բոլորը, ինչ որ ցանկանում և պահանջում են ագրարականութեան հարուստ դասակարգերը։ Եւ միայն բանւորների վերաբերմամբ է ցարի իշխանութիւնն միահեծան և անասճման միայն բանւորների և նրանց պաշտպանների հետ է նա վարուած ինչպէս ցանկանում է, միայն բանւոր դասակարգի վրայ է ծանրանում ցարի միահեծան կառավարութեան ճնշող լուծն ու անասճման կամայականութիւնը։ Միանգամայն ընդ միշտ լիշենք այդ բանը։

Ռուսական պետութիւնը— դա նոյնպէս մի դործարան է։ Ինչպէս գործարանատէրը ունի իր գործարանի կառավարիչը, վերատեսուչները, աւագ և կրտսէր վարպետները և այլն, նոյնպէս և ցարը ունի իր վարձկան ծառաները— մինիստրները, նահանգապետները, ժանդարմները, ոստիկանութիւնը ու չինովիկների միւս տեսակները, որոնցով ցարը այնպէս հեղեղել է ամբողջ երկիրը։

Յարի ամենաառաջին և ամենազլխաւոր օգնականները մինիստրներն են։ Մինիստրների թիւը Ռուսաստանում շատ է։ Ամենակարեւոր մինիստրութիւնները— այդ Ներքին գործոց և Ֆինանսների մինիստրութիւններն են։

Մի քիչ մօտից տեսնենք թէ ինչպէս է կազմուած կառավարչական մարմինը Ռուսաստանում։

Ներքին գործոց մինիստրը շատ մեծ իշխանութիւն ունի. նա է բոլոր ժանդարմների և ոստիկանութեան զլխաւոր կառավարիչը, ամբողջ ոստիկանութիւնը— սկսած մինիստրի օգնականներից, նա-

հանգապատներից, ժանդարմների գեներալներից մինչև ամենահասարակ ժանդարմն ու ոստիկանը ոստիկանը հպատակում են ներքին գործոց մինիստրին, ղառում են նրա լիակատար և անմիջական տրամադրութեան տակ:

Ամեն մի մինստրութիւն ունի ծառայողներին առանձին կազմ, չինովնիկների ահագին լէգէոն: Ամեն մի չինովնիկ պարտաւոր է անպայման հպատակել իր անմիջական իշխանաւորին: Օրինակ ոստիկանի անմիջական իշխանաւորն է պրիտաւաւի օգնականը, լետոյ գալիս են պրիտաւաւը, պօլիցմէյստրի օգնականը իսկ գաւառում գաւառապէտը, սրանցից աւելի բարձր կանգնած են նահանգապէտը, մինիստրը, իսկ այս բոլորի վերև մի կառավարիչ—ցարը, որին հպատակում է ամբողջ ոստիկանութիւնը:

Ժանդարմները նոյնպէս իրենց կազմը ունեն սկսում է հասարակ ժանդարմից, լետոյ գալիս է ենթասպան, ապա ֆէլդֆելէյը, սպան, գնդապէտը, գեներալը, մինիստրը և ամենաբարձրը նորից ցարը:

Մինանսների մինստրութեան մէջ նոյնպէս ստորին չինովնիկները հարտակում են աւելի բարձրերին. այսպէս գործարանային վերատեսուչները—Ֆինանսների մինիստրի աջ թեւն են կազմում, նրանք ոչ այլ ինչ են քան գործարանային ուրեագնիկներ, որոնք նշանակւած են գործարանում “կարգ ու կանոն”, պահպանելու, այսինքն, աւելի պարզ ասած, գործարանատէրերին պաշտպանելու և բանւորներին նեղելու համար: Հետաքրքրական է, որ Մոսկվայի պօլիցմէյստր Տրեպովը (աւելի ճիշտ ասած լրտեսների գլխաւոր Զուբատովը*) Մոսկվայի գեներալ նահանգապէտին (ցարի հօրեղբորը) ներկայացրած իրեն, սմենքի: լու լայանի դադանի դեկուցման մէջ գործարանային վերատեսուչների մա-

*) Տես “Տրեդ-իւնիօնիզմ և Սոցիալիզմ”, գրքոյկը: Թարգմ.

սին ասում է, որ նրանք գործարանային ոտիկաններ են, որ գործում են ֆինանսների մինիստրի անունից: Նոյնպէս է նալում նոցա վրա ինքը, Ֆինանսների մինիստրը: Նա (Ղիտաէն) իր մի գաղտնի շրջաբերականի մէջ գովում է նրանց, գործարաններում կարգը վերականգնելու համար «խելացի միջոցներ ձեռք առնելու համար»: Կարելի է մատնացոյց տնել և նրա վերջերս հրատարակած հրամանի վրայ, որով գործարանային վերատեսուչներին հրամայում է «երթարկել նահանգական վարչութեան, այսինքն՝ ոստիկանութեան և ժանդարմիայի կարգադրութիւններին:

Առհասարակ որ մինիստրութիւնը կուզէք վերցրէք, ամեն տեղ կան ստորին և բարձր չինովնիկներ ամեն տեղ առաջինները պէտք է անպայման հպատակեն երկրորդներին, իսկ այդ բոլորի գլխին, չինովնիկները և զինւորականների գլխին բազմած է ցարը և կառավարում է նրանց:

Պարզ է, որ եթէ ամեն մի չինովնիկ իր պաշտօնավարութեան մէջ պարտաւոր է հպատակել իր իշխանութեան կարգադրութիւններին ու հրամանները, ուրեմն նրա գործունէութեան համար պատասխանատու է նրա իշխանաւորը,* այսինքն վերջի վերջոյ ցարը: Եւ իսկպէս, ցարը այնպիսի կարգեր է մտցրել, որ որևէ պաշտօնեայի, նոյն իսկ մի հասարակ ոստիկանի դատի չի կարելի ենթարկել առանց նրա իշխանութեան համաձայնութեան: Ահա թէ ինչպիսի հոգատարութեամբ է խնամում ցարը իր չինովնիկներին: Իդուր չեն ասում ժանդարմները, ցարի այս ամենասիրելի չինովնիկները

*) Անգլիայում բոլորովին հակառակ է. այնտեղ ամեն մի պայտօնեայ պատասխանատու է իր գործունէութեան համար, եթէ նոյն իսկ նա այդ արել է իր իշխանութեան հրամանով:

որ իրենք ցարի «Հաւատարիմ», ծառաներն են: Իսկապէս էլ այդ «ծառաները», ամենամեծ հնազանդութեամբ կատարում են իրենց «տիրոջ» կամքը և հրամանները: Ինչպէս որ գործարանի բոլոր ծառայողները գործում են գործարանատիրոջ կամքի համաձայն և բացի գործանից պիտի հոգան միմիայն իրենց տիրոջ օգուտների մասին և հակառակ դէպքում դուրս կլունդուեն, այնպէս էլ Ռուսաստանում բոլոր չինովնիկները մինխտրից սկսած մինչև ամենավերջին ոստիկանը պէտք է սրբութեամբ կատարեն իրենց ցարի կամքն ու նրա օրէնքները:

Իսկ մեզ արդէն յայտնի է, որ այդ բոլորը հարուստների համար է: Բոլոր այդ օրէնքները ու հրամանները հրատարակում են բացառապէս հարուստների—բուրժուազիայի—ամեն յարմարութիւններ տալու և բանւորներին ու գիւղացիներին նեղելու նպատակով: Ուրիշ ցանկութիւն, ուրիշ մըտածմունք ոչ ցարը և ոչ նրա կառավարութիւնը չունեն և չեն էլ ունենալ: Յարը—բուրժուազիայի պահապան շունն է, ինչպէս մի հաւատարիմ շուն գիշեր ցերեկ պահապան է իր տիրոջ, նայնպէս և ցարը ամենայն հաւատարմութեամբ պահպանում է բուրժուազիային և օգնում է նրան բանւորներին կեղեքելու և նեղելու մէջ: Յարի բոլոր չինովնիկները, մինխտրները, ժանդարմները, ոստիկանութիւնը և այլն պարտաւոր են այդ բանի մէջ օգնելու ցարին, պարտաւոր են ձեռնել բանւորներին, մի խօսքով, ինչպէս ստրուկ, մի ճորտ պարտաւոր են հպատակուել ցարին—իրենց կառավարչին: Ինչպէս պատերազմի ժամանակ բոլոր զինւորները ու սպաները պարտաւոր են կարօրէն հպատակուել իրենց զօրավարին և կատարել նրա բոլոր հրամաններն ու կարգադրութիւնները, նոյնպէս և Ռուսաստանում— որտեղ նոյնպէս մղւում է մշտական

պատերազմ բանւորների և կապիտալիստների մէջ—բոլոր չինովնիկները սկզբից մինչև վերջ պարտաւոր են կատարել ցարի հրամանները: Դուկ եթէ բոլոր չինովնիկները հպատակուեմ են ցարին, հեռակապէս ցարի և միմիայն ցարի վրայ է ընկնում ռուսական բոլոր չինովնիկների և պաշտօնեաների գործողութիւնների ամբողջ պատասխանատուութիւնը:

Վերցնենք այսպիսի մի օրինակ: Որևէ գործարանի կամ արհեստանոցի օրինակ բանւորները վճռել են իրենց գործարանատիրոջ դէմ կոււելու համար մի ընկերութիւն կազմել, զանաքան հիմնել, ձեռք բերել այնպիսի գրքեր, որոնց մէջ խօսուում է կապիտալիստների դէմ կոււելու միջոցների մասին և այլն. մի խօսքով միջոցներ ձեռք առնել իրենց գրութիւնը բարւոքելու համար: Եւ ահա այդ բոլորը իմանում են ժանդարմները և ձեռքակալում են նրանց ու բանտ դնում: Սկսւում է «քաղաքական» գործ:

Գուցէ շատերը կստեն, որ ցարը այտուել ինչ մեղաւոր է. ձեռքակալում են ժանդարմները և ոչ թէ ցարը: Յարը դրա մասին խօսի չգիտէ էլ...

Բայց դրան կարելի է պատասխանել, որ թէև ցարը առանձնապէս չէ կարգադրել հէնց նրան բանտարկել, բայց այդ կարգադրութեան խօսի կարիքէլ չկար, որովհետև նա սիրելով գործարանատէրերին և նրանց բարիքի մասին հոգալով մի անգամ ընդ միշտ մի օրէնք է հրատարակել, որով բանւորներին (բայց ոչ հարուստներին) արգելւում է ժողովներ գումարել, ընկերակցութիւններ և դրամարկղ հիմնել, գործադուլներ անել, արգելւում է կարդալ այնպիսի գրքեր, որտեղ բանւորների և կառավարութեան մասին ճշմարտութիւններ է գրւած և այլն. և մի անգամ ընդ միշտ հրամայել է ձեռքակալել այն անձանց, որոնք չեն կամենում հպատակուել այդ

100/20063 (1109063) 20293-60



օրէնքին (միւսնոյն է բանւոր թէ ինտիլիգէնտ լինի):

Հետեւապէս, ամեն անգամ, երբ ժանդարմները խուզարկութիւն են անում, ձեռքակալում և բանտըն են նստեցնում բանւորներին և ուրիշներին, կամ տաժանակիր աշխատանքի են փքորում, ամեն անգամ այդ անում են ցարի և նրա օրէնքների անունից*, բուրժուազիայի շահերը և ցարի իշխանութիւնը պահպանելու նպատակով:

Այդ բաւական չէ, ցարը վերջի վերջոյ պատասխանատու է սոսիկանութեան այն գործողութիւնների համար, որոնք նոյնիսկ օրէնքով թույլատրւած չեն: Օրինակ սոսիկանութիւնը բանւորների և քաղաքական բանտարկեալների հետ վարում է այնպիսի խստութեամբ, որ նայնիսկ ցարի օրէնքներով այդ թույլատրելի չէ. նա նրանց ծեծում է մտրակներով և ճիւղտներով, գնդակահար է անում, մի անգամ Պետերբուրգում նոյնիսկ այս տեսակ դէպք պատահեց, որ սոսիկանութիւնը բանւորներին անկողնուց ոյժով վեր էր կացնում և ստիպում գործարան գնալ աշխատելու: Նրա անօրինութիւնները այնքան շատ են, որ թւել չի կարելի!.. Ժանդարմները նոյն իսկ բանտերում հանգիստ չեն թողնում իրենց ղոհներին:** Որպէս զի ստիպեն նրանց ամեն ինչ խոստովանել, նրանք դիմում են ամենաստոր և ամենաանխիղճ միջոցների. նրանց արգելում են

*) Ժանդարմները ձեռքակալելիս այդպէս էլ դիմում են նրանց. «յանուն օրէնքի ես ձեզ ձեռքակալում եմ»:

***) Միանման դէպքեր տեղի ունեցան և Թիֆլիսում 1903 թ. ամառւայ ընդհանուր գործադուլի ժամանակ. սոսիկանութիւնը անէ տուն էր ման գալի և ոյժով ստիպում բանւորներին գործարան գնալ: Յիշենք և մեր ընկեր Վլադիմիր Ալեքսովիչու նոյն թւի օգոստոսին Վետերսի բանտում գինւորի զնգակից գազանաբար սպանելը: Թարգմ.

զբօսնել, տեսնել իրենց ծնողների հետ, — նրանք զրկում են բանտարկեալներին նրա ամենամեծ մըխիթարութիւնից — գրքեր կարգաւուց, աղաւաղում են և կեղծում նրանց ընկերների ցուցմունքները, սպառնում են հազար ու մի պատիժներով, մութ սենեակներում են պահում նրանց, միայն հացով ու ջրով են կերակրում, գիշերը մի քանի անգամ զարթեցնում և հարցաքննութեան են ենթարկում, տարիներով պահում են որպէս զի նա վերջապէս զգւելով կամաւոր կերպով խոստովանւի ամեն ինչ և այլն և այլն: Օրինակ ամենագործունեայ սօցիալիստներից մէկը՝ Հոֆմանը* բանտարկւած էր: Նա ունէր մի մալր, որին անչափ սիրում էր: Նրա մալրը որդու դարձից մերձիմահ հիւանդացու: Ժանէարմները յայտնի չէ ինչ միջոցներով տեղեկացել զին որ Հոֆմանը մօրը չափազանց սիրում է և ահա առաջարկում են նրան տեսնել մօր հետ և վերջին մնաս բարեն ասել, միայն այն պայմանով, որ ամեն ինչ խոստովանւի... որքան էլ որ մեծ էր նրա մէջ սիրելի մօր տեսնելու ցանկութիւնը, այնուամենայնիւ նա ստիպւած էր մեռել այդ առաջարկը պայմանը չափազանց ստոր էր!..

Մի ուրիշ օրինակ. մի քաղաքական բանտարկեալի բանտում եղած ժամանակ մեռնում է նրա հարսնացուն: Նրան ոչինչ յայտնի չէ այդ մասին, բայց ժանդարմները ընդունակ են շարունակ «բարեկամանալու», նրանք դուրս են բերում նրան բանտից և տանում ուղղակի իր հարսնացուի թաղման հանգիսին: Այստեղ նա նոր է հասկանում թէ ումն են թաղում! Դժւատ է ներկայացնել նրա վիշտը... Այս ժանդարմները իրենց ղոհներին տանջելու մէջ շատ

*) Նա այժմս վախճանւած է. նա գրող էր և գրում էր «Նարոդնայեա վոլեա», և «Վեստնիկ նարոդնոյի վոլի» թերթերում:

Հմուտ են!

Յիշենք, վերջապէս, 1891 թւին ոստիկանութեան առաջ բերած աւերումը Պէտերբուրգում Մաքսէլի բանւորների հանրակացարաններում. կարճառօտ կերպով յիշենք Նիկոլայ 11ի գծուծ թագաւորութեան այդ ստոր գործողութիւնը և փորձենք սպացուցել, որ այդ տեսակ դէպքերի պատասխանատուութիւնը նոյնպէս վերջի վերջոյ ցարի վրայ է ընկնում:

1898 թ. Գեկտեմբերին Մաքսէլի և Պալի գործարանում 4000 շուշահաներ գործադուլ արին: Թէպէտ բանւորները իրենց չափազանց հանգիստ էին պահում, բայց ոստիկանութիւնը այնուամենայնիւ «միջոցներ ձեռք առաւ»: Ծախ և առաջ նա հրամայեց փակել գործարանի ռայօնում գտնւած բոլոր ճաշարանները և խանութները, սրպէս զի բանւորները քաղցից ստիպւած դադարեցնեն գործադուլը: Ռուսաց ցարի ոստիկանութիւնը անուահաման ուշագիւր է դէպի կապիտալիստները: Չուտով մտրակները և ձեռքակալութիւնները սկսեցին կատարել իրենց դերը: Երեք օրուայ ընթացքում ձեռքակալեցին մօտ 200 բանւոր և 16 ինտիլիգենտ: Սակայն այսքանն էլ բաւարարութիւն չտուեցին նորին մեծութեան ժանգարմներին ու ոստիկանութեան: Գեկտեմբերի 15-ի զիշերը նբանք մտան բանւորների հանրակացարանը, սրտեղ ապրում էին 800 բանւոր: Ահա այստեղ սկսուեց ամենաբասմնելի ջարդը: Մենք չենք նկարագրի այն սարսափելի տեսարանները, սրունք տեղի ունեցան այստեղ, ինչպէս օրինակ երբ ոստիկանները ընկան մի լղի կնոջ վրայ և այնքան ծեծեցին, որ նա վրիժեց: Բանւորներին ծեծում էին մտրակներով, փայտերով, խփում որսեղ որ պատահում էր, գլխին, երեսին... ծեծում առանց խտրութեան, ով որ պատահում էր, ծեբերին, ան-

մեղ երեխաներին և կանանց... Մի բանւորը կողերը փշրեցին, մի ուրիշի աչքը վնասուեց, երրորդը խելագարուեց... և այլն:

Եւ վերջը քնչ զուրօ եկաւ! Դուրօ եկաւ այն, որ բանւորները ամեն տեսակ վայրենութեան, ծաղրի ու ծանակի ենթարկւելուց վերջ դատի էլ ենթարկւեցին! Դատարանն էլ ամենաբարբարոսաբար դատապարտեց 6 հոգու մի տարւան, մէկին 8 ամսւան, 4 կանանց երեք շաբթւան բանտարկութեան, իսկ արգարացան միայն չորս հոգի!! .

Անօրինութիւնները զբանով չվերջացան: Բանւորների սլաշտպանների և պրօկուրորի զանգատի համաձայն գործը ընկաւ սենատը, որը հրամայեց նորից քննել գործը: Բայց որովհետև Սենատումն էլ նստած են գործարանատէրերի պաշտպանները, ուստի պ.պ. սենատորները նոր անօրինութիւն գործեցին բանւորների վերաբերմամբ: Սենատի վճռի համաձայն նորից դատի ենթարկւեցին այն չորս բանւորները, որոնք սկզբում արդարացել էին: Բայց ամենազաղբիլին այն է, որ պ. պ. սենատորները նախօրոք կազմել էին իրենց որոշումը: Ահա թէ որպիսի դատաւորներ ունենք! Ի նկատի ունեցէք, որ Սենատը համարւում է օրէնքների պահապան ու վերահսկիչը: Լաւ պահապան ունեն Ռուսաստանի օրէնքները!

Բայց զբանով էլ չվերջացաւ գործը: Մինչև դատավարութեան օրը հասնելը ցարի ոստիկանութիւնը արդէն բոլոր վկայ բանւորներին և միւս կասկածելի անձանց արգէն կարողացել էր ուղարկել իրենց հայրենիքը, իսկ մի քանիսներին և Արևելեան Սիբիր 3—4 տարով:

Այդպիսով Մաքսվէլի գործարանի բանւորները այնքան խիստ պատիժների ենթարկւեցին, թէ ոստիկանութեան և թէ դատարանի կողմից, իսկ գոր-

ծի իսկական մեղաւորները իրենց անասելի գազանութիւնների համար ոչ մի պատիժ չը կրեցին և նոյն իսկ ոստիկանութեան ստորին պաշտօնեաները 6ակօն բուրլի ընծայ ստացան գործարանատիրոջից:

1900 թ. Փետրւարին Մաքսվէլի բանւորների գործը նորից սկսեց քննել. բայց Արդարագատութեան մինիստրի կարգադրութեամբ դադարեցրին գործի քննութիւնը: Բանը նրանումն է, որ Սենատը դատարանի որոշումը քանդել էր այն պատճառով որ դատի ժամանակ դատապարտւածները բարեկամներին չէին թող տւել ներկայ լինելու: Երկրորդ քննութեան ժամանակ ստիպւած էին հասարակութեան առջ քննելու գործը, և ահա երբ վկաներն և բանւորների պաշտպանները սկսեցին պառմել ոստիկանութեան գործած անօրինութիւնները՝ Սրբադարագատութեան մինիստրը հրամայեց ընդհատել գործի ընթացքը: Վերջապէս գործը քննեց 1900 թ. Հոկտեմբերին, իսկ մինչև այդ ցարը իր միահեծան իշխանութեամբ խախտեց Սենատի որոշումը և «բարձրագոյն», հրամայեց որ բացի դատապարտեալների կնոջից, ծնողներից և երեխաներից (ամեն անից մի հոգի) ոչ ոք իրաւունք չունենայ դատին ներկայ լինելու... Իստարանի երկրորդ որոշումով 5 հոգի դատապարտւած էին 6 ամսւան բանտարկութեան, 4 կանայք երեք շաբթւան, իսկ 5 հոգի արդարացան:

Դժտառ չէ ապացուցանել որ Մաքսվէլի բանւորների հետ այդպիսի բարբարոսաբար վարելու մեղքը ընկնում է վերջի վերջոյ ցարի վրայ, ինչպէս և նա մեղաւոր է Սենատի որոշումը խախտելու մէջ: Եւ իսկապէս, չէ որ ոստիկանութիւնը այդ բոլորը անում էր ցարի օրէնքների անունից, հետևապէս և հէնց իրեն ցարի անունից և նրա հրամանով: Ոստիկանութիւնը հէնց նրա համար է որ ցարին

պաշտպանէ, ինչպէս ինքն ասում է— „նեղ քին թշնամ ի ներլից“ այսինքն՝ սօցիալիստներից և բանւորներից: Չկայ աշխարհիս երեսին մի բարբարոսութիւն, մի լանդանք, մի չարիք, որ ցարի ոստիկանութիւնը և ժանդարմերիտն չգործադրեն իրենց “պաշտելի միապետին”, — ցարին հաւատարմութեամբ ծառայելու համար, իսկ հաւատարմութեամբ ծառայելու համար հարկաւոր է սրբութեամբ կատարել իշխանութեան հրամանները, այն իշխանութեան, որը նշանակւած է ցարից: Իշխանութիւնը ուղարկել է ոստիկանութեանը Մաքսվէլի “խռովարար”, բանւորներին ձեռքալալելու համար: Ինչ էլ որ լինի հրամանը պէտք է կատարել... Եթէ մենք լիշենք, որ ստորին պաշտօնեաների գործողութիւնների համար պատասխանատու են աւելի բարձր պաշտօնեաները և վերջի վերջոյ ցարը և ուշադրութեան առնենք նոյնպէս և այն, որ ոստիկանութիւնը թէ իր անձնական և թէ ցարի միւս ծառայողների փորձերից շատ լաւ գիտէ, որ ցարը և նրա իշխանութիւնը բանւորների և սօցիալիստների վերաբերմամբ ամեն բան թողարտում են, որ կարելի է նրանց ձեռնել, ջարդել և ծաղրել և դրա համար ոչ մի պատիժ չեն կրի— ահա եթէ այս բոլորը ուշադրութեան առնենք, այն ժամանակ Մաքսվէլի հանրակացարաններում ոստիկանութեան գործած բոլոր բարբարոսութիւնները շատ հասկանալի կը դառնան. ոստիկանութիւնը գիտէր, որ ցարին և նրա կառավարութեանը դուր կգայ... Պարզ է ուրեմն, որ ցարին յայտնի է արդեօք նրա պաշտօնեաների տյս կամ այն չարագործութիւնը թէ ոչ այդ միևնոյն է, նրանց պատասխանատուութիւնը ընկնում է միմիայն նրա վրայ: Միայն այսքանը պէտք է լաւ լիշել, որ թէ ցարի և թէ նրա պաշտօնեաների բոլոր գործողութիւնները միմիայն բուրժուա-

զիայի օգտի և ցարի իշխանութիւնը պահպանելու համար են:

Մինչև այժմ մենք խօսում էինք ցարի և նրա անունից գործող իշխանութեան վարմունքների մասին: Եթէ այժմ նայենք և տեսնենք թէ ինքը ցարը անձամբ ինչպէս է գործում, այն ժամանակ աւելի կհամոզուենք թէ ում է ծառայում ցարը և ում համար է որ նա գոյութիւն ունի:

Մենք արդէն տեսանք, թէ ինչպէս ցարը Մաքս-էլի բանւորների գործի ժամանակ չամաչեց խախտել Սենատի որոշումը: Այժմ ուրիշ փաստեր չի-շենք:

1887 թ. Չերնիզովի նահանգապետ Անատասեր յայանի բարբարոս և նոյնիսկ աւազակ,* մի քանի օր շարունակ ճիպտներով ծեծում էր գիւղացիներին նրա համար, որ այս վերջինները չէին թոյլ տալիս որ իրենց հողից ապօրինի կերպով օգտուեն երկու կալւածատէրեր—Պսլովցևն ու Կրասովսկին: Եւ ահա այս բարբարոսութեան համար Ալէքսանդր III ցարը յայտնել էր իր «բարձրագոյն» շնորհակալութիւնը! Ծեծեցէք որքան ուզում էք գիւղացիներին, միայն թէ աղնականութեանը և կալւածատէրերին ձեռք չտանք!..

Թող բանւորները լաւ յիշեն, թէ ինչպէս Ալէքսանդր IIIի ձագուկը՝ Նիկոլայ IIը գովաբանում էր այն զինւորներին, որոնք 1895 թ. Եւրոսլավի գործադուլ անող բանւորներին ջարդում ու գնդակահար էին անում (մի քանի բանւորներ սպանւեցին)**

* Հաստատում են, որ Չերնիզովի տաճարի օգտին ժողովարութիւն անելիս նա չէր մոռացել իր գրպանը: Այժմ նա Պետական խորհրդի անդամ է:

** Ռուսաստանի քրիստոնասէր զօրքը արդէն շատ անգամ է բանւորների արիւն թափել յիշենք հէնց Կոմարովի, Իրգայի, Մարիսուօի, Ռուստովի, Տիխոբէցկի, Միխայլովի,

Ուրեմն ցարը ոչ միայն իր օրէնքներով թոյլատրում է հալածել բանւորներին, այլ և իր «բարձրագոյն», շնորհակալութիւնն է յայտնում, երբ ոստիկանութիւնն ու ժանդարմները ջարդում ու ըսպանում են անպաշտպան բանւորներին: Եւ ինչու համար են սպանում! Երա համար միայն, որ նրանք չեն ցանկանում որպէս զի կապիտալիստները կողոպտեն և ոստիկանութիւնը նեղէ իրենց!.. Երա համար միայն, որ բանւորները ցանկանում են քիչթէ շատ մարգավայել ապրուստ ունենալ! Ուրեմն բանւորները պէտք է շատ լաւ իմանան, թէ իրենց մասին ինչպէս է «հոգում», նորին մեծութիւնը:

Նոյն Նիկոլայ IIը հրամայեց ուժեղացնել ոստիկանութեան կազմը և գործարաններում յայտնի ու ծածուկ լրտեսներ նշանակել, որի համար 1898թ. աշնանը հրամայած էր պետական գանձարանից-այսինքն ժողովրդի փողերից կէս միլլիոն յատկացնել, իսկ միայն Պետերբուրգի ոստիկանութեան կազմը ուժեղացնելու համար 200,000 ռ. բաց թողնել: 1899 թ. սկզբում նշանակւեցին 60 նոր ոստիկանութեան վերակացուներ և 2320 հասարակ ոստիկաններ այնպիսի հաշուով, որ ամեն մի 3 հազար բանւորի վրայ ընկնում էր մի վերակացու և ամեն մի 50 բանւորի վրայ մի ոստիկան: Բացի դրանից Նիկոլայ IIի կառավարութիւնը պարտաւորեցրեց ամեն մի գործարանատիրոջ իր հաշուով իւրաքանչիւր 200 բանւորի համար մի լրտես պահել: Բանւորներին շատ լաւ յայանի է, թէ ինչու համար են այդքան ոստիկաներն ու լրտեսները. նրանք նշանակւած են բանւորների իւրաքանչիւր քայլին հետեւելու համար, որպէս զի դրանով խանգարեն կապիտալիստների դէմ մղած կռիւրը և իր ժամանակին յայտնեն գործարանատիրոջը բանւորների գործարատուտի, Բաղւի, Բաթումի Թիֆլիսի և այլ դ'պքերը:

Ճագուղի կամ մի ուրիշ որոշման մասին: Միայն բանւորների ամենաչար թշնամին կարող է այդպէս վարել: Եւ ցարը հէնց այդ թշնամին է!

Բանւորներն երևի շատ լաւ յիշում են, թէ Մոսկւայում Խոզինի դաշտում ցարի թագադրութեան ժամանակ քանի հազար մարդ փչացաւ: Այդ բոլորի մէջ մեղաւոր էր Մոսկւայի ոստիկանութիւնը ցարի հօրեղբոր Սերգէյ Ալէքսանդրովիչի հետ միասին (Մոսկւայի նահանգապետը): Եւ ինչ արաւ նրանց ցարը դրա համար: Հէնց որ դատական քննութիւնը սկսեց պարզել Մոսկւայի շատ նշանաւոր մարդկանց յանցանքները, ցարը հրամայեց դադարեցնել քննութիւնը և բաւականացաւ միայն Մոսկւայի ոստիկանապետին պաշտօնից հեռացնելով,* այն էլ ժողովրդի աչքին թող փչելու համար: Այսպէս ցարը ժողովրդի դիակների վրայ խնձոյք սարքեց, ուրախացաւ... և հանգստացաւ... Միթէ արժէ այդպիսի դարդակ բաներով զբաղել, յուզել իրեն!..

Եւ այդ միակ դէպքը չէ, երբ “նորին մեծութիւնը” իրեն հաւատարիմ ծառաներին ազատում է հէնց իր հրատարակած օրէնքների պատիժներից:

Մի ուրիշ փաստ. Վարչապի նահանգապետ իշխ. Իմէրետինսկին Հեհաստանի մասին մասնաւորապէս մի զեկուցում ներկայացրեց ցարին: Յարը այդ զեկուցումը կարգաւորեց յետոյ իր «բարձրագոյն» նկատողութիւններն էր արել այդ զեկուցման վրայ. այնտեղ, որտեղ յմերէտինսկին առաջարկում էր ուժեղացնել, ցարը միանգամայն համաձայնում է դրա հետ, իսկ այն ժամանակ, երբ յմերէտինսկին առաջարկում է մի քանի մեղմութիւններ մտցնել

* Եթէ շէնք սխալում յետոյ նորից նրան մեծ պաշտօն տւեցին:

(Իհարկէ ոստիկանութեան օգտի տեսակէտից և ոչ թէ բանւորների օգտի) ցարը չէ համաձայնում և կասկածում է, որ այդպիսի միջոցները օգտակար լինեն...

Բոլորովին ուրիշ կերպ է վարում ցարը, երբ բանւորներին և սօցիալիստներին տաժանակիր աշխատանքի կամ Միբիբ աքսորելու “բարձրագոյն հրամաններ”, է ստորագրում. այստեղ կրկնապատկում է ցարի վճռակոնութիւնը, նա արդէն չի տատանում... Չի տատանում այն հասարակ պատճառով, որ նրա համար թանգ են բուրժուազիայի շահերը և ոչ թէ բանւորների, որոնց նա միայն ճնշում և նեղում է.

Անհամար է այն մարդկանց թիւը, որոնք ցարի նեոքով զոհ են գնացել միապետութեանը և ցարի սիրելի ձագուղի—բուրժուազիային!

Իսկ ժողովրդի դառն քրտինքով աշխատած փողերից դարձեալ նոյն ցարի հրամանով որքան է ծախուում ոստիկանական և ժանդարմերիայի բազմաթիւ բանակի վրայ? Ամբողջ Ռուսաստանը հեղեղած է լրտեսներով... Հազարաւոր ժանդարմներ և ուրիշ գաղտնի ու յօտնի լրտես գործակալներ են աշխատում... «չարիքը արմատախիլ անելու համար»: Ամենքին, որոնց վրայ ժանդարմները փոքր իշատէ կասկածում են՝ ձեռքաւարում և բանտն են նստացնում: Իսկ մեզ մօտ Ռուսաստանում խօսմ կասկածի տակ ընկնելը շատ հեշտ է. բաւական է որ մարդ կարգայ մի այնպիսի գրքոյկ, որի մէջ ճշմարտութիւնն է գրած բանւորների և առհասարակ ուսական կեանքի մասին և ահա նա կասկածելի անձնաւորութիւն է, որևէ բանւոր եթէ մտածէ գործադուլ անել և դրա մասին յայտնում է իր ընկերներին, որպէս զի նրանք էլ մասնակցեն—նա արդէն կասկածելիների շարքն է անցնում, եթէ

դուք մտածում էք մի բանւորական ժողով կազմել՝
 դուք կասկածելի անձնաւորութիւն էք, եթէ ուտի-
 կանութեան ականջն է ընկնում, որ Յովհաննէսը
 ծանօթացել է կասկածելի ներսէսի հետ, ուրեմն
 Յովհաննէսը նոյնպէս կասկածելի է և այլն և այլն
 այդպէս անվերջ*:

Եւ այս բոլոր անօրինութիւններն ու ճնշումները,
 որոնք գործադրուում են բանւորների ու սօցիալիստ-
 ների վերաբերմամբ, այս բոլոր յանցանքներն ու
 չարագործութիւնները, որոնց համար արևմտեան
 եւրոպական երկրներում տաժանակիր աշխատանքի
 կդատապարտւէին — այս բոլորը մեզ մօտ կատար-
 ւում է ցարի օրէնքների և կամքի համաձայն, յօ-
 գուտ բուրժուազիայի և յանուն ցարի անսահման իշ-
 խանութեան պահպանութեան:

Ուրեմն բուրժուազիան և ցարը իր ամբողջ
 կառավարութեամբ — ահա թէ ովքեր են Ռուսաս-
 տանի բանւորների դժբաղդութեան ու նրանց կրած
 նեղութիւնների պատճառները: Բուրժուազիան կո-
 զոպտում է բանւորներին, ծծում է նրանց արիւնն
 ու քրտինքը և խլում նրանց բերանից իրենց սե-
 փական քրտինքով ձեռք բերած մի կտոր հացը,
 իսկ ցարը այդ միջոցին պահպան է հանդիսանում
 և փրկում նրան զանազան «դժբաղդութիւններից
 ու փորձանքներից»... Հէնց որ բանւորները մտա-
 ծում են պաշտպանել իրենց շահերը, հէնց որ նը-
 րանք վճռում են որևէ պահանջ անել կապիտա-
 լիստներէից, ցարի թաղը բռնում է իսկոյնակետ քան-
 ւորի կոկորդից և քաշ է տալիս նրան դէպի բանտ,
 աքսորում Սիբիր և այլն!! Դուք եթէ բանւորները

* Ամբողջ Ռուսաստանի 3/4 մասը «սասակացրած հսկո-
 զութեան», տակն է գանւում և այդպիսով այդ բոլոր մա-
 սերի ազգաբնակչութիւնը կասկածելիների շարքին է պատ-
 կանում: Ծան. թարգմ.

շատ են կամակորոււմ, այն ժամանակ ասպարէզ են
 գալի կազակների մորակներն ու զինւորական զըն-
 դակները...

Այսպէս ուրեմն բանւորները չունեն ոչ մի պաշտ-
 պան, այլ ունեն թշնամիներ: Եթէ այդ այդպէս է
 ուրեմն բանւորները իրենց վիճակը բարւոքելու և
 երջանկութիւն ու ազատութիւն ձեռք բերելու հա-
 մար պէտք է իրենց յօյաները դնեն իրենք իրենց
 վրայ: Մեր մեծ ուսուցիչները — Մարքսն ու Էնգել-
 սը իզուր չեն արդէն վաղուց յայտարարել, որ բան-
 ւորների ազատութիւնը կարող է իրագործուել մի-
 միայն իրենց՝ բանւորների ձեռքով, այլինքն՝ մի-
 միայն դաւակարգային կախւր, բանւոր դատակարգի
 կապիտալիստների դէմ մղած կռիւր կապ բանւոր-
 ներին ազատութիւն, հաւասարութիւն և եղբայ-
 րութիւն:

Ուրեմն ներկայումս թնչ է հարկաւոր Ռուսաս-
 տանի բանւոր դասակարգին*:

Իւրաքանչիւր բանւոր առանձնապէս իրեն տիրոջ
 հետ ոչինչ չէ կարող անել. այսինքն՝ նա չի կարող
 աւելացնել տալ վարձագինը, կրճատել աշխատանքի
 ժամերը, պահանջել գործարանի կամ արհեստանոցի
 առողջ շինութիւն, հեռացնել տալ որևէ ծառայողի,
 որը նեղում է բանւորին և այլն: Միայն միաբան
 գործունէութեամբ — ինչպէս ասում են. բոլորը մե-
 կի և մէկը բոլորի համար — որևէ գործարանի կամ
 արհեստանոցի բանւորները կարող են իրենց պա-

* Վերև ասածներից արդէն կարելի է եղբակացնել թէ
 ինչ է հարկաւոր Ռուսաստանի բանւոր դասին: Բացի դը-
 բանից մենք խորհուրդ ենք տալիս ամեն մի բանւորի լաւ
 կարգաւ «Բանւորական գործը Ռուսաստանում», գլբոյկը:
 (Այդ գլբոյկի հայերէնը չուտով լոյս կոտեսնի)՝ նրանք այն-
 տեղ կգտնեն այս հարցի մանրամասն պատասխանը, իսկ
 այստեղ այդ մասին կկատենք համալուս կերպով:

Հանջների բաւարարութիւն ստանալ:

Իսկ միաբան գործելու համար հարկաւոր է, որ բանւորները սկզբում խօսեն իրար հետ և խորհրդակցեն թէ ինչ և ինչպէս ձեռնարկել. միութիւններ կազմել արդեօք թէ գործադուլ անել, զանձարան հիմնել թէ թուուցիկներ հրատարակել և այլն և այլն, հազար ու մի հարցեր կան, որոնց նախ և առաջ պէտք է որոշեն նախ քան իրենց որոշ պահանջի առաջարկելը: Բայց մեզ յայտնի է, որ ռուսական օրէնքները արդելում են ժողովներ անել: Գեռ վաղուց չէր, որ օստիկանական միւստորը (ներքին գործերի) այդ մասին առանձին գաղտնի շրջաբերականով լիշեցրեց բոլոր նահանգապետներին: Այդ շրջաբերականով միւստորը խօսիւ հրամայում է ամբողջ օստիկանութեանը բանւորներին թող չը տալ որ նրանք որևէ ժողով անեն, իսկ գլխաւորներին և նրանց, որոնք չեն ցանկանայ հպատակել իշխանութեան կարգադրութեանը՝ ձեռքալալել և նոյն լակ աքսորել որևէ ուրիշ տեղ:

Ուրեմն պարզ է, որ բանւորները պէտք է աշխատեն ձեռք բերել դործադուլներ և ժողովներ անելու ազատ իրաւունքը, որովհետև միայն այն ժամանակ նրանք կարող են յաջողութեամբ կուել կապիտալիստների դէմ իրենց կենցաղը բարւոքելու համար:

Գործադուլների և ժողովների իրաւունքի հետ սերտ կերպով կապւած է խօսքի և մամուլի ազատութիւնը: Խօսքի ազատութիւն ունենալ—նշանակում է իրաւունք ունենալ ազատ, այսինքն ժողովներում, փողոցներում և հրապարակներում բացարձակ խօսել ժողովրդի հետ նրա կարիքների մասին: Մամուլի ազատութիւն ունենալ—նշանակում է իրաւունք ունենալ ազատ, այսինքն՝ առանց որևէ արգելքի և թուլատուութեան գրել, տպագրել

և կարգալ այն գրքերը, լրագիրները ու թերթերը, որտեղ բանւորների իսկական գրութիւնն է նկարագրում և առհասարակ խօսում է այն ամենի մասին, ինչ որ կատարւում է մեր երկրում և առհասարակ ամբողջ աշխարհում: Բանւորներին շատ լաւ յայտնի է, որ ռուս կառավարութիւնը արգելում է հրատարակել այդպիսի գրքեր, իսկ նրանց, որոնք հրատարակում են այդ գրքերը և նոյն իսկ որոնք կարդում են նրանց ձեռքալալում և բանան են նստացնում, կամ աքսորում են Սիբիր և Իտալիանակիր աշխատանքի: Նոյն վիճակին են ենթարկւում և նրանք, որոնք համարձակւում են ժողովներում և այլ հասարակական տեղերում բացարձակապէս խօսելու բանւորների հետ նրանց կարիքների մասին: Այն ինչ բանւորներին շատ հարկաւոր են և յառ գրքեր և լաւ լրագիրներ ու առհասարակ ճշողրիտ տպագրական խօսք, որովհետև եթէ նրանք լաւ իմանան թէ ինչպէս են ապրում ուրիշ երկրների բանւորները, ինչ են ձեռնարկում նրանք իրենց կեանքը բարւոքելու համար, ինչից են առհասարակ բանւորները նեղւում և ինչպէս կարելի է թեթեւացնել կամ բոլորովին ազատել այդ նեղութիւնից—ահա այս բոլոր իմանալով բանւորները կարող են մանրամասնօրէն քննել ժողովներում իրենց գրութիւնը, որպէս զի կապիտալիստներից և կառավարութիւնից այս կամ այն պահանջն անեն: Աւելնորդ է ասել, որ առանց ազատ խօսելու իրաւունքի այդ ժողովները անկարելի են:

Ուրեմն՝ բանւորները պէտք է պահանջեն խօսքի և մամուլի ազատութիւն:

Բայց առաջ գնանք: Ժողովներում կարող է ընդունել այս կամ այն որոշումը, օրինակ գործադուլ անել:

Գործադուլը—սա ամենագորեղ միջոցն է, որ

ունեն բանւորները կապիտալիստների դէմ կուելու համար. միայն գործադուլով — իհարկէ խելացի և միաբան — բանւորները կարող են իրենց պահանջների բուարարութիւն ստանալ: Թող նրանք ծանօթանան այն բանի հետ, թէ ինչպէս էին կուում Բէլգիայի բանւորները իրենց ազատութեան համար և կտեսնեն թէ իրենց դրութիւնը լաւացնելու և մինչև անգամ քաղաքական իրաւունքներ ձեռք բերելու համար ինչ զօրեղ և անփոխարինելի միջոց է գործադուլը: Թէև Ռուսաստանի բանւորները իրենք իրենց սեփական փորձով շատ լաւ գիտեն որ Ռուսաստանի շատ տեղերում միայն գործադուլներով են ստիպել կապիտալիստներին զիջու մներ անել: Գործադուլներից վախենում են ոչ միայն կապիտալիստները, այլ և ցարի կառավարութիւնը — սա գործադուլներից վախենում է աւելի քան կապիտալիստները, որովհետև ամեն մի գործադուլ պարզում է Ռուսաստանի քաղաքական կազմի զգւելիութիւնը և ցոյց է տալի թէ ցարը և իր չինովնիկները ինչպիսի անարդարութեամբ և խիստ են վերաբերում դէպի բանւորները:

Բանւորների վերաբերեալ բոլոր օրէնքներն հրատարակել են միշտ խոշոր գործադուլներից յետոյ. այսպէս օրինակ, 1886 թ. Յունիսի 8-ի տուգանքների վերաբերեալ օրէնքը Վորոզովի գործարանի նշանաւոր գործադուլի հետևանքն է, 1897 թ. Յունիսի 2ի աշխատանքի ժամերի կրճատման վերաբերեալ օրէնքը Պետերբուրգի բանւորների 1895 — 97 թւականների մեծ գործադուլների և այլն:

Ի հարկէ, մեզ շատ լաւ յայտնի է, որ այդ օրէնքները չեն ապահովում բանւորների շահերը, բայց այստեղ կարևորը այն է, որ ուս կառավարութիւնը մտածում է բանւորների մասին և նրանց համար օրէնքներ է հրատարակում գործա

դուլներից վախենալով, այլ խօսքերով՝ միայն բանւորների պահանջով:

Այն, ցարի և նրա կառավարութիւնը գործադուլներից վախենում են, ինչպէս կրակից, և այդ է պատճառը, որ այնքան անխղճօրէն աղաւաղում են գործադուլների նշանակութիւնը:

Ներքին գործերի մինիստրութեան գաղտնի շրջաբերականներում գործադուլները համարում են պետական կարգ ու կանոնի և հասարակութեան անգորութեան համար «ամենավտանգաւոր», բաներ և անւանում «անկարգութիւններ»: Այս միակ ուժեղ գործիքը, որ ունեն բանւորները իրենց դրութիւնը բարւոքելու համար, ուս կառավարութիւնը անւանում է «անկարգութիւններ» և այլն... Ուրեմն բանւորները պէտք է յոյս դնեն միմայն իրենց սեփական ոյժերի վրայ և վճռականապէս պահանջեն ուս կառավարութիւնից գործադուլների ազատութիւն:

Իսկ որովհետև բանւորների շարժումը կարող է արագ աճել այն ժամանակ միայն, երբ բոլոր բանւորները միացած են մի որևէ միութեամբ, այսինքն կազմում են մի ընդհանուր բանւորական կուսակցութիւն. (օրինակ, հեշտ է գործադուլ առաջ բերել այն գործարանում, որի բանւորները ունեն իրենց միութիւնները), ուստի բանւորները պէտք է առաջադրեն ամեն տեսակ միութիւնների, ընկերակցութիւնների և ուրիշ քաղաքական ու տնտեսական կազմակերպութեանց ազատութեան պահանջը:

Բանւորներին անհրաժեշտ է նոյնպէս բանւորական դրամաբիղներ հիմնելու ազատ իրաւունքը, որովհետև առանց դրամական միջոցների անկարելի է կամ շատ դժւառ է օրինակ գործադուլներ անել և առհասարակ դժւառ է իրենց նիւթական և հոգեկան դրութիւնը բարւոքելու նպատակով որևէ բան

ձեռնարկել: Ուրեմն բանւորները պէտք է ցարից և նրա կառավարութիւնից պահանջեն. ժողովների, գումարումների, մամուլի, խօսքի, միութիւնների, գործադուլների և բանւորական գրամարկիւնքի ազատութիւն:

Բայց կարելի է արգեօք, որ ցարը, լինելով Ռուսաստանի ինքնակալ և անասձման միապետը, բանւորներին ապա այդ իրաւունքները: Այ, ոչ և ոչ!.. Մինչև որ Ռուսաստանում գոյութիւն ունի միապետական կազմը, այսինքն մինչև որ ցարը կառավարում է ինքնիշխան կերպով — իհարկէ, միայն բանւորների վերաբերմամբ, ինչպէս տեսանք—մինչև որ նա օրէնքները հրատարակում է յօգուտ հարուստների և նրանց խորհրդով ու համաձայնութեամբ, մինչև որ մենք չունենք սահմանադրութիւն, սահմանադրական ազատութիւն և պարլամենտ, որտեղ բանւորները կարողանան մասնակցութիւն ունենալ օրէնքների հրատարակութեան մէջ և առաջարկել իրենց օրէնքները՝ Ռուսաստանի բանւորները կառավարութիւնից ոչ մի իրաւունք չեն ստանալ, հետևապէս, միշտ պէտք է ներքին ստիկանութիւնից և կապիտալիստներից, աշխատելով իրենց թշնամիների համար մինչև իրենց ոյժերի վերջնական լարումը:

Թող բանւորները լաւ լիշեն, որ Ֆինանսների միւսիստը գործարանային վերատեսուչներին ուղղած իր մի գաղտնի շրջաբերականով հրամայում է նրանց որ չհամարձակեն բաւարարութիւն տալ բանւորների նայն իսկ օրինական պահանջներին, եթէ այդ պահանջները անուժ են «ոչ օրինական», ճանապարհով... Դիսկ, սրովհետև «ոչ օրինական», ճանապարհ ասելով կառավարութիւնը հասկանում է բանւորների «հաւաքական» գործունէութիւնը, այսինքն գործադուլները և այլն, որովհետև

ուրիշ «օրինական», ճանապարհ չունեն նրանք,— ապա հետևաբար եթէ բանւորները հրաժարւեցին պ. միւսիստի առած այդ «ոչ օրինական» ճանապարհներից, այն ժամանակ բոլորովին կխեղդւեն գործարանատէրերի ձեռքից:

Թող բանւորները չմոռանան երբէք, որ մեր կառավարութեան կարծիքով բանւորները շատ լաւ են ապրում... Մենք կատակ չենք անում. Ֆինանսների միւսիստը իր շրջաբերականներից մէկում կապիտալիստների վերաբերմունքը գէպի իրենց բանւորները անւանում է «հայրական» ու «արդար»... Բանւորները, իհարկէ, իրենց կաշւի վրայ փորձել են այդ «հայրական» վերաբերմունքը: Վերջապէս մի՞թէ քիչ բան կայ լիշելու որպէսզի ասենք. «այո, բնկերներ, մենք սչինչ լաւ բան չենք կարող սպասել ցարից—հարուստների այս սպասուօրից և նրա չինովսիկներից—միւսիստներից, ժանգարմանից և ոստիկանութիւնից... Ուրեմն լոյսներս դնենք մեզ վրայ, կուենք կառավարութեան և գործարանատէրերի հետ, ձեռք բերենք քաղաքական ազատութիւն!!...»

Ուրեմն, բանւորները իրենց բոլոր պահանջների, թռուցիկների, լրագրների ու գրքերի մէջ նախ և առաջ կառավարութեանը առաջադրելու են քաղաքական ազատութեան պահանջը, այսինքն պահանջեն, որ հաստատուի պարլամենտ, որտեղ բանւորները միւս գասակարգերի հետ միասին կարողանան ունենալ իրենց ներկայացուցիչները — իրենց պաշտպանները:

Այս բոլորը մասին բանւորները պէտք է պնդեն իրենց բնկերներին, պէտք է քարոզեն միշտ և ամեն տեղ!..

Միայն քաղաքական ազատութիւն ձեռք բերե-

լով բանւորները հնարաւորութիւն կունենան կապիտալիստները դէմ յաջողութեամբ կուելու, որովհետեւ միայն քաղաքական ազատութիւն ունենալով նրանք կարող են բանւորական միութիւններ կազմակերպել, ժողովներ և գործադուլներ անել, գրամարկիզներ հիմնել, գրքեր ու լրագիրներ հրատարակել և այլն: Միայն քաղաքական ազատութեան, սահմանադրութեան միջոցին բանւորական միութիւնները կընդգրկեն բանւորական բոլոր մասաները, որովհետեւ այն ժամանակ այդ և սերիշ շատ պատճառներից այլ ևս չեն բանտարկի և չեն աքսորի գանազան հեռու տեղիք..

Ինչպէս վերը ասացինք, ուստի կառավարութիւնը նոյն իսկ ներկայումս մտնում է բանւորական շարժումից և եթէ Ռուսաստանի բանւորները միութիւններ կազմեն և վերջի վերջոյ միանան «Ռուսաստանի Սոցիալդեմոկրատիական Բանւորական Կուսակցութեան», հետ կազմելով մի լնդհանուր բանւորական կուսակցութիւն, այն ժամանակ նըրանց սլօք այնքան անընկճելի և սարսափելի կլինի, որ ուստի կառավարութիւնը ստիպւած կլինի զիջել...

Արեւմն բանւորները թնդ անդադար առաջ տանեն իրենց բանւորական գործը!

Այգպէս, բանւոր ընկերներ, յանաջ!...



207

1010

“ԿՈՎԿՈՍԵԱՆ ՄԻՌԻԹԵԱՆ», ՀԱՅԵՐԷՆ ՀՐԱՏԱՆԱԿ.

1. Նախագիծ ծրագրի.
2. Սօցիալիզմի էությունը.
3. Ինչ պետք է գիտնայ և յիշէ ամեն մի բանւոր?
4. Ինչպէս է Մինիստ. հոգում բանւոր. մասին
5. Պետական գանձարան
6. Տրէդ-իւնիօնիզմ և Սօցիալիզմ.
7. Ազէս քարոզիչը.
8. Գենիստովի ճառը.
9. Ռուսաստ. քաղաքակ. կազմը և բանւոր.
10. “Պրօլետարիատի կռիւր», (№ 1—3).
11. “Պրօլետարիատի կռիւր» [Թերթիկը № 1—5
Տարագրում է.
12. 1901 թ. Մայիսի մէկը.



2013

